**Հանդիպում ֆրանսիահայ փաստաբան Դավիթ Հարությունյանի հետ**

30.01.2013 07:30

Հարգելի փաստաբաններ,

«ՖՐԱՆԿՈՖՈՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ» իրավաբանների հասարակական կազմակերպությունը ՀՀ փաստաբանների պալատի հետ համատեղ կազմակերպում է սեմինար-քննարկում Փարիզի փաստաբանների պալատի անդամ՝ ազգությամբ հայ, փաստաբան Դավիթ Հարությունյանի հետ: Միջոցառման ժամանակ կքննարկվեն Ֆրանսիայում փաստաբանական գործունեություն իրականացնելու առանձնահատկությունները հետևյալ թեմաների շուրջ՝ «ԿԱՌՊԱ փաստաբանական վճարումների դրամարկղի ֆրանսիական մոդելի կիրառումը», «Ֆրանսիայում փաստաբանական գործունեության մասնագիտական պատասխանատվության ռիսկի ապահովագրումը», «Ֆրանսիայում փաստաբանական գաղտնիքի առանձնահատկությունները»:

Սեմինար-քննարկումը տեղի կունենա 2013թ. փետրվարի 2-ին ժամը 14.00-ից մինչև 16.00-ը՝ ՀՀ փաստաբանների պալատի դահլիճում:

Մուտքն առանց նախնական գրանցման:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })